



ՄԱԿ-ի Մարդու իրավունքների մանդատը
Տեղեկագիր No 2
Քեղևնեցի 2008թ.

UN Human Rights Mandate
Reference Paper No.2
October 2008

UN Department of Public Information
Yerevan Office
UN AN-1000-October 2008
UNO/DPI Yerevan/088

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների մանդատը

Տեղեկագիր No 2



ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄՔՆԳՅԱՆՈՒՄ
ՀՈՋԱԿԱԳԻՐ


*Արժանապատիություն և
արդարություն բոլորին*

ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության Երևանի օրասանարան

Օրևան 2008

ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Վանդառը

Տեղեկագիր No 2.



ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՍՁՆԳՅԱՆՈՒՐ
ՀՈՉԱԿԱԳԻՐ

Արժանապատվություն և
արդարություն բոլորին

ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության
վարչության Երևանյան գրասենյակ

Երևան 2008

The present Reference Paper gives brief information on United Nations Human Rights Mandate, which is one of the organization's three pillars. All human beings are endowed with basic human rights by virtue of their common humanity, to live a life of freedom and dignity. The human rights are universal, inalienable, indivisible and interrelated.

As a principle the ideology of the basic human rights is accepted widely. It is embodied in the UN Charter, Universal Declaration of Human Rights and in the numerous declarations and constitutions throughout the world.

UN Human Rights Mandate includes information on the UN Human Rights core documents, treaty system of that sphere, monitoring conventional bodies and other procedures, Human Rights Council, as well as about the High Commissioner for Human Rights.

The Reference Paper is dedicated to the 60th Anniversary of the Universal Declaration of Human Rights officially celebrated from 10 December 2007 till 10 December 2008.

Concept by Armine Halajyan, edited and prepared for publication by Anahit Harutyunyan. Contributions by DPI intern Garik Melkonyan.

Սույն տեղեկագիրը համառոտ անդրադառնում է Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների մանդատին, որը կազմակերպության երեք հենասյուներից մեկն է: Բոլոր մարդիկ օժտված են մարդու իրավունքներով ու հիմնարար ազատություններով ի ծնե և հանուն ազատ ու արժանապատիվ կյանքի: Մարդու իրավունքները համընդհանուր են, անօտարելի, անբաժանելի և փոխկապակցված:

Մարդու հիմնական իրավունքների գաղափարախոսությունը լայնորեն ընդունված է: Այն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրությունում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և աշխարհի բազմաթիվ երկրների հռչակագրերում և սահմանադրություններում:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների մանդատը տեղեկատվություն է բովանդակում ՄԱԿ-ի մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերի, այդ ոլորտի պայմանագրային համակարգի, վերահսկող պայմանագրային մարմինների ու այլ ընթացակարգերի, Մարդու իրավունքների խորհրդի (Մախկին հանձնաժողովի), ինչպես նաև Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարի մասին:

Տեղեկագիրը նվիրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 60-ամյակին, որը պաշտոնապես նշվում է 2007թ. դեկտեմբերի 10-ից մինչև 2008թ. դեկտեմբերի 10-ը:

Ստահողացունը՝ Արմինե Հալայանի: Այն խմբագրել և հրատարակության է պատրաստել Անահիտ Հարությունյանը, աշխատակցել է ՊՏԿ պրակտիկանտ Գարիկ Մելքոնյանը:



UN Department of Public Information
Yerevan Office
UN AN-1000-October 2008
UNO/DPI Yerevan/086

Բովանդակություն

Ներածություն	4
1. Համընդհանուր իրավունքների սահմանումը համընդհանուր հռչակագրում	6
1.1. Մարդու իրավունքների միջազգային օրինաչափը	7
1.2. Մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերը	8
1.3. Մարդու իրավունքների Վիեննայի համաշխարհային խորհրդաժողովը	9
1.4. Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարը	10
2. ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող հիմնական մարմինները	12
2.1. Մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրային մեխանիզմները ..	12
2.2. Մարդու իրավունքների հանձնաժողովի փոխակերպումը խորհրդի	16
2.3. Մարդու իրավունքների հանձնաժողովի և Մարդու իրավունքների խորհրդի հիմնական տարբերությունները	17
3. ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող այլ մարմիններ և ընթացակարգեր	18
3.1. Կանոնադրական ընթացակարգեր.....	18
3.2. ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընթացակարգեր	21
3.3. Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ընթացակարգեր.....	22
Հավելվածներ	
1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 30 հոդվածների առարկայական ցանկ	23
2. Մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերի և դրանց կամընտիր արձանագրությունների աղյուսակը ըստ ժամանակագրության, ՀՀ մասնակցությունը դրանց	24
3. ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային համակարգը	26
4. ՀՀ ներկայացրած զեկույցները պայմանագրային մարմիններին	27
5. Հապավումներ	29
Օգտագործված և օգտակար գրականության ու հղումների ցանկ	30

Ներածություն

Բոլոր մարդիկ ի ծնե օժտված են մարդու իրավունքներով՝ ազատ և արժանապատիվ կյանքով ապրելու համար: Մարդու իրավունքները համընդհանուր են. ամենուր և բոլորի համար նույնն են: Անօտարելի են. հնարավոր չէ ոչ ընծեռել դրանք, ոչ էլ զրկել դրանցից: Անքակտելի են. իրավունքների որևէ աստիճանակարգում գոյություն չունի, և որևէ իրավունք չի կարող անտեսվել մեկ այլ իրավունքի օժանդակելու համար:

Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) ունիվերսալ միջազգային միջկառավարական կազմակերպություն է, որն օգնում է աշխարհի պետություններին գտնել հակասությունների և վեճերի կարգավորման ուղիները և լուծել այն հրատապ խնդիրները, որոնց բախվում են մարդիկ առօրյա կյանքում: ՄԱԿ-ի գործունեության հիմքը իր կանոնադրությունն է՝ միջազգային պայմանագիր, որով անդամ պետությունները պարտավորվում են, մասնավորապես, համատեղ միջոցներ ձեռնարկել՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանն ու խրախուսմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մարդկության դեմ կատարված հանցագործությունները ցույց տվեցին այն ավանդական տեսակետի սնանկությունը, թե իր քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքը բացառապես յուրաքանչյուր պետության ներքին գործն է: «Միավորված ազգեր» անվանումը, որ առաջարկել է ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը, առաջին անգամ գործածվել է 1942թ. «Միավորված ազգերի հռչակագրում», երբ 26 պետությունների ներկայացուցիչներ պարտավորվեցին համատեղ պայքար մղել ֆաշիստական դաշինքի երկրների դեմ: ՄԱԿ-ին նախորդել է Ազգերի լիգան, որը ստեղծվել է համանման պայմաններում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: 1945թ. 50 պետությունների ներկայացուցիչներ հավաքվեցին Սան Ֆրանցիսկոյում՝ մշակելու Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը: Միավորված ազգերի կազմակերպությունը պաշտոնապես հանդես եկավ 1945թ. հոկտեմբերի 24-ին, երբ կանոնադրությունը ստորագրած պետությունները վավերացրին այն:

ՄԱԿ-ի կանոնադրությունում նշված է, որ կազմակերպության երեք հիմնական խնդիրներն են՝ ապահովել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, պետությունների տնտեսական և սոցիալական համագործակցությունը և առաջ մղել ու պաշտպանել **«հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ բոլորի համար՝ առանց ռասայի, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերակման»**: ՄԱԿ-ի կանոնադրության միջոցով բոլոր անդամ պետություններն իրավաբանորեն կապված են միմյանց մարդու բոլոր իրավունքների և ազատությունների լիակատար իրականացման պայքարում:

Մարդու հիմնական իրավունքներն աշխարհում լայնորեն ընդունված և ճանաչված են. դրանք ներկայացված են սահմանադրություններում, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրությունում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: Վերջինս ընդունվել է 1948թ., և այս տարի նշվում է նրա 60-ամյակը: Համընդհանուր հռչակագրի դրույթները սովորական միջազգային իրավունքի կշիռ ունեն, քանի որ լայնորեն տարածված են և ընդունվում են որպես պետությունների վարքագիծը գնահատող չափանիշ: Շատ նորանկախ պետություններ մեջ-

բերում են Համընդհանուր հռչակագիրը կամ ներառել են նրա դրույթները իրենց հիմնարար օրենքների կամ սահմանադրությունների մեջ:

Հռչակագրի 30 հոդվածները ներկայացնում են քաղաքացիական, քաղաքական, տնտեսական ու սոցիալական հիմնարար իրավունքները, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր երկրում ապրող յուրաքանչյուր մարդ:

Խոսելով մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՄԱԿ-ի անցած ուղու մասին՝ հարկ է նշել, որ ՄԱԿ-ը մարդու իրավունքների առաջնդման ու պաշտպանության ոլորտում մի շարք միջազգային կառույցների միջոցով գործում է տարբեր ուղղություններով: Նա հանդես է գալիս որպես *համաշխարհային խղճի խտացում, օրինաստեղծ, դիտորդ և վերահսկիչ, համադատող կենտրոն, հետազոտող, բողոքարկման ատյան, փաստերի անաչառ հետաքննող և դիվանագետ*: Կազմակերպությունը նշանակալի առաջընթացի է հասել ազգերի կողմից ընդունելի վարքագծի միջազգային չափանիշներ հաստատելու առումով և մշտապես միջազգային հանրության ուշադրությունը հրավիրում է այն գործողությունների վրա, որոնք վտանգում են այդ չափանիշները: Անգնահատելի են կազմակերպության նվաճումները միջազգային իրավունքի կանոնակարգման գործում: Կազմակերպության ստեղծած մեխանիզմների միջոցով ոչ միայն սահմանվում են մարդու իրավունքները, ոչ միայն գործածության մեջ են մտնում, այլև վերահսկվում է պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը, հետաքննվում՝ խախտումները: Կազմակերպությունը հազարավոր բողոքներ ու հաղորդագրություններ է ստանում մարդու իրավունքների խախտման մասին, որոնց առնչությամբ պարզաբանումներ է պահանջում համապատասխան կառավարություններից և կոչ անում երաշխավորել ենթադրյալ զոհերի իրավունքները: Հավաքված տվյալների հիման վրա հսկայածավալ հետազոտություններ և ուսումնասիրություններ են կատարվում, որոնք հետագա քաղաքականության և օրինաստեղծ գործունեության հիմք են դառնում: Վերջապես, կազմակերպության Գլխավոր քարտուղարը և Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը անդամ երկրների հետ առանձնագրույցների ընթացքում քննարկում են մարդու իրավունքների հետ կապված իրենց մտահոգություններն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են բանտարկյալների ազատ արձակումը, մահապատժի դատավճռի մեղմացումը և այլն:

1. Համընդհանուր իրավունքների սահմանումը համընդհանուր հռչակագրում

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ) տասնամյակների ընթացքում ստեղծված մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնաքարն է:

Նրա 1-ին և 2-րդ հոդվածներն ասում են, որ «*բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով*» և կարող են օգտվել հռչակագրով սահմանված բոլոր իրավունքներից ու ազատություններից *«առանց որևէ ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի տարբերակման»*:

3-ից 21-րդ հոդվածները բովանդակում են մարդու քաղաքացիական ու քաղաքական իրավունքների սահմանումները, մասնավորապես՝

- կյանքի, ազատության ու անվտանգության իրավունքը,
- ստրկությունից ու կախվածությունից ազատության իրավունքը,
- խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը,
- հայրենիքի հանդեպ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը, իրավական պաշտպանության իրավունքը, կամայական ձերբակալման, կալանքի կամ արտաքսման չենթարկվելու իրավունքը, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունքը, անմեղության կանխավարկածի իրավունքը,
- անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության չենթարկվելու իրավունքը, պատվի կամ հեղինակության հանդեպ ոտնձգություններից զերծ լինելու իրավունքը, նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունքը,
- ազատ տեղաշարժվելու իրավունքը, ապաստան գտնելու իրավունքը, քաղաքացիություն ստանալու իրավունքը,
- ամուսնանալու և ընտանիք ստեղծելու իրավունքը, սեփականություն ունենալու իրավունքը,
- մտքի, խղճի ու կրոնի ազատությունը, համոզմունքի ու արտահայտման իրավունքը,
- խաղաղ հավաքների ու միավորումներ կազմելու իրավունքը,
- կառավարմանը մասնակցելու և պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունքը:

22-27-րդ հոդվածները առաջ են քաշում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ունեն բոլոր մարդիկ, մասնավորապես՝

- սոցիալական ապահովության իրավունքը,
- աշխատելու իրավունքը, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունքը,
- արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը,
- հանգստի և ժամանցի իրավունքը,
- առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակ ունենալու ի-

- րավունքը,
- կրթություն ստանալու իրավունքը,
- հանրության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

Եզրափակիչ 28-30-րդ հոդվածներով ընդունվում է, որ յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ապրելու սոցիալական կամ միջազգային այնպիսի հասարակարգում, որով լիովին կիրականացվեն հռչակագրով սահմանված մարդու իրավունքները. այդ իրավունքները կարող են սահմանափակվել միայն այլոց իրավունքների ու ազատությունների ճանաչումն ու հարգանքն ապահովելու նպատակով և ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության պահանջները կատարելու համար, և յուրաքանչյուր անձ իր պարտականություններն ունի այն հանրության առջև, որում ապրում է¹:

1.1. Մարդու իրավունքների միջազգային օրինաչարը

ՄԱԿ-ի հիմնադրումից երեք տարի անց ընդունվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը մարդու իրավունքների մասին ներկայիս օրենքների հիմնաքարն է: 1966թ. ընդունվեցին Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրերը:

- **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը** (1966թ.) ունի 148 անդամ պետություն: Դաշնագրի նպատակն է առաջ մղել ու պաշտպանել մարդու իրավունքները, ներառյալ՝
 1. արդար և բարենպաստ պայմաններում աշխատելու իրավունքը,
 2. սոցիալական պաշտպանվածություն, համապատասխան կենսամակարդակ և ֆիզիկական ու մտավոր բարեկեցության ամենաբարձր մակարդակն ունենալու իրավունքը,
 3. կրթության իրավունքը և մշակութային ազատության ու գիտական բարիքները վայելելու իրավունքը:

Դաշնագիրն ապահովում է այս իրավունքների իրականացումը՝ առանց որևէ խտրականության: Հայաստանը Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին միացել է 1993թ. սեպտեմբերի 13-ին:

- **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը** և դրան կից Առաջին կամընտիր արձանագրությունը ընդունվել են 1966թ.: Դաշնագիրն ունի 151 անդամ պետություն, իսկ արձանագրությունը՝ 104:
 1. Դաշնագիրն առնչվում է այնպիսի իրավունքների, ինչպիսիք են ազատ տեղաշարժվելու իրավունքը, օրենքի առջև հավասարության, արդար դատավարության իրավունքը և անմեղության կանխավարկածը, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, կարծիք ունենալու և արտահայտվելու ազատությունը, խաղաղ հավաքների իրավունքը, հասարակական գործերին և ընտրություններին մասնակցելու ազատությունը և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:

¹ ՄԻՀՀ 30 հոդվածների առարկայական ցանկը տե՛ս Հավելված 1-ում:

2. Ղաշնագիրն արգելում է կյանքից կամայական զրկումը, խոշտանգումը, դաժան կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, ստրկությունը և հարկադիր աշխատանքը, կամայական ձերբակալությունը կամ կալանքը, անձնական կյանքի կամայական միջամտությունը, պատերազմի, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչությունը:

1993թ. հունիսի 23-ին Հայաստանը միացել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին և դրան կից Առաջին կամընտիր արձանագրությանը:

Հռչակագիրը, երկու դաշնագրերը և վերջիններիս կամընտիր արձանագրությունները կազմում են Մարդու իրավունքների միջազգային օրինաչարը: Եթե հռչակագրի դրույթները հանձնարարական բնույթ ունեն և ընդունվում են որպես պետությունների վարքագիծը գնահատելու չափանիշ, ապա դաշնագրերի դրույթները պարտադիր ուժ ունեն դրանք վավերացնող երկրների համար, որոնց պարտավորությունների կատարումը վերահսկվում է հատուկ ստեղծված մարմինների միջոցով:

1.2. Մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերը²

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված մոտ 90 կոնվենցիաների ու հռչակագրերի ստեղծման սկիզբ դրեց: Երբ պետությունները վավերացնում են այս համաձայնագրերը, պայմանավորվում են, որ մարդու իրավունքներին վերաբերող իրենց օրենսդրությունն ու գործողությունները վերանայվեն անկախ փորձագիտական մարմինների կողմից:

- **Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան** (1966թ.) վավերացվել է 169 երկրների կողմից: Ելնելով այն նախադրյալից, որ ռասայական տարբերությունների վրա հիմնված գերիշխանության ցանկացած քաղաքականություն արդարացի չէ, գիտականորեն կեղծ է և բարոյապես ու իրավական տեսանկյունից դատապարտելի, կոնվենցիան սահմանում է «ռասայական խտրականությունը» և պարտավորեցնում անդամ երկրներին միջոցներ ձեռնարկել վերացնելու այն և՛ օրենսդրությամբ, և՛ գործնականում: Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993թ. հունիսի 23-ին:
- **Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան** (1979թ.)՝ իր 175 անդամ պետություններով, երաշխավորում է սեռի հատկանիշով խտրականության վերացումը և սեռերի իրավահավասարությունը, հատուկ միջոցներ է ձեռնարկում՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը քաղաքական և հասարակական կյանքում, ազգության, կրթության, աշխատանքի, առողջության, ամուսնության և ընտանիքի հարցերում: Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993թ. սեպտեմբերի 13-ին:
- **Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան** (1984թ.)՝ իր 134 անդամ երկրներով, խոշտանգումը

² Տես հավելված 2:

սահմանում է որպես միջազգային հանցագործություն, պարտավորեցնում պետություններին կանխել այն և պատժել հանցագործներին: Ոչ մի բացառիկ հանգամանք չի կարող խոչտանգման արդարացում ծառայել, և ոչ էլ խոչտանգողը կարող է պաշտպանվել հրամանների ներքո գործելու հանգամանքով: Հայաստանը միացել է այս կոնվենցիային 1993թ. սեպտեմբերի 13-ին:

- **Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան** (1989թ.) ընդգծում է հատկապես երեխաների խոցելիությունը և երեխաների պաշտպանությունն ի մի բերում մի համապարփակ օրենքի մեջ: Կոնվենցիան երաշխավորում է խտրականության չենթարկվելը և ընդունում, որ երեխայի հիմնական շահերը պետք է ընկած լինեն բոլոր գործողությունների հիմքում: Հատուկ ուշադրության են արժանացել փախստական, հաշմանդամ և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները: Անդամ երկրները պետք է երաշխիքներ ապահովեն երեխաների գոյատևման, զարգացման, պաշտպանության և ներգրավվածության համար: Հայաստանը միացել է այս կոնվենցիային 1993թ. հունիսի 23-ին:
- **Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան** (1990թ.) սահմանում է հիմնական իրավունքներ և սկզբունքներ, ինչպես նաև միջոցառումներ՝ պաշտպանելու միգրանտ աշխատողներին միգրացիայի ողջ ընթացքում՝ անկախ նրանց օրինական կամ անօրինական լինելուց: Կոնվենցիան, որ ուժի մեջ է մտել 2003թ. հուլիսի 1-ին, 24 անդամ պետություն ունի: Հայաստանն այս կոնվենցիային դեռևս չի միացել:
- **Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա** (2006թ.): Սա դեռ ուժի մեջ չի մտել, բայց արդեն ունի 57 ստորագրություններ: Համարվում է մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերից մեկը: Հայաստանն այս պայմանագրի տակ ստորագրել է 2007թ. ապրիլի 10-ին:
- **Հաշմանդամ անձանց իրավունքների մասին կոնվենցիան** (2006թ.) երաշխավորում է բոլոր սահմանափակ կարողություններով անձանց բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացումը՝ բացառելով հաշմանդամությամբ պայմանավորված խտրականության որևէ դրսևորում: Հայաստանն այս պայմանագրի և դրա կամընտիր արձանագրության տակ ստորագրել է 2007թ. մարտի 30-ին:

1.3. Մարդու իրավունքների Վիեննայի համաշխարհային խորհրդաժողովը

1968թ. նշվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-ամյակը: Այդ տարին հռչակվեց Մարդու իրավունքների միջազգային տարի, որի գլխավոր իրադարձություններից մեկը Թեհրանում տեղի ունեցած Մարդու իրավունքների միջազգային խորհրդաժողովն էր: Սա առհասարակ կառավարությունների առաջին խորհրդաժողովն էր՝ նվիրված մեկ առանձին թեմայի:

Մարդու իրավունքների երկրորդ համաշխարհային խորհրդաժողովը, որ տեղի ունեցավ 1993թ. Վիեննայում, և որին մասնակցում էր 171 երկիր, վերահաստատեց մարդու իրավունքների համընդհանուր բնույթն ու առանցքային դերը: Խորհրդաժողովում ընդունված հռչակագրում և գործողությունների ծրագրում մասնակից պետությունները հայտարարեցին, որ մարդու իրավունքները դարձել են *«միջազգային հանրության օրինական մտահոգության առարկա»*, և *«մարդու բոլոր իրավունքները համընդհանուր, անբաժանելի, փոխկապակցված և փոխկախված են»*: Խորհրդաժողովը վերահաստատեց նաև **զարգացման իրավունքը**՝ որպես համընդհանուր իրավունք, ինչպես նաև մարդու իրավունքների և անհատի զարգացման անբակտելի կապը: Ի լրումն՝ հաստատվեց, որ *«ժողովրդավարությունը, զարգացումը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքը փոխադարձ կապի մեջ են և փոխադարձաբար լրացնում են միմյանց»*: Հստակ տարբերակվեցին մարդկանց այն խմբերը, որոնց իրավունքներն առանձնապես պաշտպանության կարիք ունեն. կանայք, բնիկ ժողովուրդները, փախստականները, քաղաքացիություն չունեցող անձինք, երեխաները, հաշմանդամները, անօրինական ազատազրկվածները և բռնի բնաջնջման զոհերը, ինչպես նաև միգրանտ աշխատավորները և նրանց ընտանիքները:

Բացի այդ, ավելի սեղմ ժամկետներ սահմանվեցին մարդու իրավունքների համաձայնագրերի վավերացման համար, հավանության արժանացավ կանանց իրավունքների խախտումների վերաբերյալ հատուկ զեկուցող նշանակելու առաջարկությունը: Առաջարկվեց ավելի մեծ միջոցներ տրամադրել մարդու իրավունքների պաշտպանությանը: Խորհրդաժողովը հանձնարարեց նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային հիմնել Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարի պաշտոն:

1.4. Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարը (ՄԻԳՀ)

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 48-րդ նստաշրջանը հաստատեց Վիեննայի հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը և հավանություն տվեց Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարի պաշտոնի վերաբերյալ առաջարկությանը (1993թ. դեկտեմբերի 20-ի 48/141 բանաձև): Այդ բանաձևում ամրագրվեցին զերագույն հանձնակատարի պարտականություններն ու լիազորությունները.

- քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բոլոր իրավունքների, ներառյալ զարգացման իրավունքի կենսագործում ու արդյունավետ պաշտպանություն,
- ի պատասխան պետությունների խնդրանքի՝ խորհրդատվական ծառայությունների մատուցում, տեխնիկական և ֆինանսական օգնություն մարդու իրավունքների ոլորտում,
- մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի կրթական և տեղեկատվական ծրագրերի կոորդինացում,
- գործուն դեր մարդու իրավունքների լիակատար իրականացման ճանապարհին ընկած խոչընդոտների վերացման և աշխարհում մարդու իրավունքների շարունակվող խախտումները կանխարգելելու գործում,
- մասնակցություն կառավարությունների հետ երկխոսություններին՝ մարդու իրավունքների հարգանքը երաշխավորելու նպատակով,
- միջազգային համագործակցության ընդլայնում մարդու իրավունքների խրախուս-

- ման և պաշտպանության գործում,
- ՄԱԿ-ի համակարգի միջոցով մարդու իրավունքների խրախուսման և պաշտպանության գործունեության կոորդինացում,
- մարդու իրավունքների արդյունավետության բարձրացման նպատակով ՄԱԿ-ի մեխանիզմների թափանցիկացում, հզորացում և պարզեցում:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը Գլխավոր քարտուղարի տեղակալն է, նրան նշանակում է Գլխավոր քարտուղարը՝ Գլխավոր ասամբլեայի հավանությամբ, չորս տարի ժամկետով: 2008թ. սեպտեմբերից Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը տիկ. **Նավանթեն Փիլեյն** է (Հարավային Աֆրիկա)³: Գերագույն հանձնակատարի գործունեության մասին զեկույցը ներկայացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին (նախկին հանձնաժողովին) և Տնտեսական ու սոցիալական խորհրդի միջոցով՝ Գլխավոր ասամբլեային:

Այսպիսով, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գլխավոր հանձնակատարը ՄԱԿ-ի այն պաշտոնյան է, որը հիմնական պատասխանատվություն է կրում մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի գործունեության համար:

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԻԳՀԳ), որը գտնվում է Ժնևում և բաժանմունք ունի Նյու Յորքում, մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի գործունեության հիմնական օղակն է և ծառայում է որպես քարտուղարություն Մարդու իրավունքների խորհրդի, պայմանագրային մարմինների և ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ կառույցների համար: Այն ամեն տարի հազարավոր բողոքներ է ստանում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, որոնք հանձնվում են ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովների և կոմիտեների քննարկմանը⁴: ՄԻԳՀԳ-ն նաև տեղային գործունեություն է ծավալում մոտ 30 երկրներում՝ ընդգրկելով ավելի քան 200 պաշտոնյա: Բացի տեխնիկական օժանդակությունից, ՄԻԳՀԳ-ի տեղական գրասենյակները իրականացնում են վերահսկման ու իրավունքների պաշտպանության գործառույթներ, ինչպիսիք են, օրինակ, տեղեկատվության հավաքումը, մարդու իրավունքներին առնչվող իրադրության ուսումնասիրությունը և խախտումների մասին զեկույցների ներկայացումը:

³ Նախկին հանձնակատարները՝ Խոսե Ալյալ Լասո, Մերի Ռոբինսոն, Սերջիո Վիեյրո դե Մելլո և Լուիզ Արբըր:

⁴ Տես <http://www.ohchr.org/>

2. ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող հիմնական մարմինները

2.1. Մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրային մեխանիզմները

Գոյություն ունեն մարդու իրավունքների միջազգային չափանիշների կենսագործումը վերահսկելու և մարդու իրավունքների խախտումների մասին գանգատները քննության առնելու մի շարք պայմանագրային և արտապայմանագրային մեխանիզմներ:

Պայմանագրի կատարումը վերահսկող մարմիններն են՝

- CESC - Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե (վերահսկում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կենսագործումը),
- HRC - Մարդու իրավունքների կոմիտե (վերահսկում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կենսագործումը),
- CERD - Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե (վերահսկում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կենսագործումը),
- CEDAW - Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե (վերահսկում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի իրագործումը),
- CAT - Խոշտանգման դեմ կոմիտե (վերահսկում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կենսագործումը),
- CRC - Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտե (վերահսկում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կենսագործումը),
- CMW - Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության կոմիտե (բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության կոնվենցիայի կենսագործումը):

Պայմանագրային մեխանիզմներ⁵

Պայմանագրային մեխանիզմներով վերահսկվում է մարդու իրավունքների դաշտին վերաբերող հիմնական միջազգային պայմանագրերի կենսագործումը: Ստեղծված տարբեր կոմիտեները կազմված են անկախ փորձագետներից, որոնք գործում են անհատապես և ոչ որպես իրենց կառավարությունների ներկայացուցիչներ, թեև ընտրվում են անդամ պետությունների ներկայացուցիչների կողմից: Անդամներն ընտրվում են աշխարհագրական արդարացի բաշխման սկզբունքով՝ այդպիսով երաշխավորելով հավասարակշիռ ներկայացուցչությունն ու իրազեկությունը հիմնական իրավական համակարգերում: Պայմանագրերի կատարումը

⁵ Տես նաև հավելված 3:

վերահսկող մարմինների հիմնական գործառույթներն են՝ մասնակից պետությունների ներկայացրած զեկույցների ուսումնասիրումը և մարդու իրավունքների խախտումների մասին գանգատները քննության առնելը:

Պայմանագրային մարմինների կազմը

CERD	18 անդամ	<i>Անդամներն ընտրվում են չորս տարի ժամկետով: Անդամների կեսի ընտրությունները կատարվում են երկու տարին մեկ:</i>
HRC	18 անդամ	
CESCR	18 անդամ	
CEDAW	23 անդամ	
CAT	10 անդամ	
CRC	18 անդամ	
CMW	10 անդամ	

- **Չեկույց ներկայացնող պետությունը:** Միջազգային պայմանագրերի մասնակից բոլոր պետությունները պարտավոր են զեկույց ներկայացնել համապատասխան պայմանագրում ամրագրված իրավունքների իրականացման գործում ունեցած առաջընթացի և այդ ասպարեզում ծագած խնդիրների մասին⁶:
- **Անհատական գանգատներ:** Միջազգային համաձայնագրերից չորսը իրավունք են տալիս անհատներին գանգատ ներկայացնելու վկայակոչված իրավունքների խախտումների մասին (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրություն):
- **Մի պետության կողմից մեկ այլ պետության դեմ ներկայացվող գանգատները:** Վերը թվարկված չորս պայմանագրերը նախատեսում են նաև, որ մասնակից պետությունները կարող են մարդու իրավունքների չարաշահումների վերաբերյալ գանգատ ներկայացնել մեկ այլ մասնակից պետության դեմ:

Պայմանագրերի հատուկ դրույթների մեկնաբանում կարելի է գտնել գանգատների վերաբերյալ «կարծիքներում», ինչպես նաև պետությունների ներկայացրած զեկույցների առնչությամբ ընդունված «եզրափակիչ դիտողություններում» կամ «եզրափակիչ մեկնաբանություններում»: Բացի դրանից, պայմանագրերը վերահսկող մարմինները ձևակերպում և ընդունում են «ընդհանուր մեկնաբանություններ» և «ընդհանուր հանձնարարականներ», որոնց միջոցով ներկայացնում են տարբեր հարցերի առնչությամբ իրենց ըմբռնումն ու փորձը: Ներկայումս գոյություն ունեն մեծ թվով ընդհանուր մեկնաբանություններ և հանձնարարականներ, որոնք ծառայում են իբրև պայմանագրերի մեկնաբանման արժեքավոր աղբյուրներ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե

Սկզբնական շրջանում, համաձայն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 16-րդ հոդվածի, պետությունների կողմից դաշնագրի կենսագործման վերահսկումը դրված էր Տնտեսական և սոցիալական խորհրդի վրա, որը հետագայում իր այդ պատասխանատվությունը փոխանցեց այդ նպատակով ստեղծված կոմիտեին: Մասնակից պետությունները պարտավորվում են հինգ տարվա պարբերականությամբ

⁶ 33-ի ներկայացրած զեկույցները պայմանագրային մարմիններին տե՛ս հավելված 4-ում:

զեկույցներ ներկայացնել դաշնագրում ամրագրված իրավունքների ապահովման ասպարեզում իրենց կողմից ձեռնարկվող միջոցների և ձեռք բերված առաջընթացի մասին: Ջեկույցներում արձանագրված տվյալները քննության առնելուց հետո կոմիտեն ամփոփում է իր դիտողությունները և հանձնարարականներ տալիս պետությանը՝ վերջինիս ուշադրությունը հրավիրելով ձախողված ընթացակարգերի վրա:

Մարդու իրավունքների կոմիտե

Հիմնվել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 28-րդ հոդվածի համաձայն: Այն կոչված է վերահսկելու անդամ պետությունների պարտավորությունների համապատասխանությունը դաշնագրի դրույթներին՝ քննության առնելով մասնակից պետությունների ներկայացրած զեկույցները և դաշնագրի դրույթների՝ նրանց կողմից թույլ տրված խախտումների մասին անհատական հաղորդագրությունները: Դաշնագրի համաձայն՝ մասնակից պետությունները պարբերական (հինգ տարին մեկ) զեկույցներ պետք է ներկայացնեն կոմիտե: Երկու կամ երեք դռնբաց ժողովների ընթացքում զեկույցը քննարկելուց հետո կոմիտեն դռնփակ ժողովում ամփոփում է իր դիտողություններն ու հանձնարարականներ ներկայացնում պետությանը, որոնք հավասարազոր են միջազգային դատարանների դատավճիռներին:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե

Ստեղծվել է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն: Կոմիտեն կոչված է վերահսկելու և օժանդակելու կոնվենցիայի դրույթների կենսագործումը: Մասնակից պետությունները պարտավորվում են երկու տարին մեկ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով կոմիտեի քննարկմանը ներկայացնել հերթական զեկույց, որում շարադրվեն ՌԽՎԿ-ի դրույթների կենսագործման նպատակով ձեռնարկված օրենսդրական, դատական, վարչական կամ այլ միջոցներ: Յուրաքանչյուր զեկույց արժանանում է երկրի զեկուցող նշանակված անդամի ուշադրությանը և մանրամասն վերլուծությանը: Եթե հինգ տարին լրանալուց հետո պետությունը զեկույց չի ներկայացնում, կոմիտեն իրավազոր է քննել երկրի իրավիճակը առանց զեկույցի:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե

Ստեղծվել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն: Կոմիտեի հիմնական գործառնությունը կոնվենցիայի դրույթների կենսագործումն է՝ հիմնվելով մասնակից պետությունների ներկայացրած պարբերական զեկույցների վրա: Նոր կամ ընտիր արձանագրության համաձայն ստեղծվել է երկու ընթացակարգ.

- ա. անհատական հաղորդագրությունների ընթացակարգ, որը հնարավորություն կտա հաղորդագրություններ ներկայացնել այն անհատների կամ նրանց խմբի անունից, որոնք հայտարարում են, թե կոնվենցիայի դրույթներից որևէ մեկի խախտման գոհ են դարձել,
- բ. ընթացակարգ, որը կոմիտեին հնարավորություն կտա հետաքննություն անցկացնելու անդամ պետությունների կողմից այդ իրավունքների պարբերական խախտումների վերաբերյալ:

Խոշտանգման դեմ կոմիտե

Ստեղծվել է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն:

Ըստ այդմ՝ անդամ պետությունը 4 տարին մեկ իր պարբերական զեկույցն է ներկայացնում կոմիտե: Եթե վերջինս հավաստի տեղեկություններ է ստանում պետության մեջ «խոշտանգումների պարբերական կիրառման» մասին և համարում, որ ստացված տեղեկությունը «արդարացնում է» հետագա քննությունը, ապա կոմիտեն լիազորվում է անցկացնելու գաղտնի հետաքննություն, որին մասնակցելու է իրավիճում նաև շահագրգիռ պետությունը: Ստացված տվյալների և տեղեկությունների լույսի ներքո կոմիտեն իր հանձնարարականներն է հղում պետությանը:

Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտե

Ստեղծվել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն: Այն կոչված է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, մասնագիտացված գործակալությունների և իրավասու մարմինների հետ համատեղ, պետական զեկույցների քննության հիման վրա իրականացնելու կոնվենցիայի դրույթների կենսագործման վերահսկումը: Ըստ այդմ՝ մասնակից պետությունները պարտավորվում են ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով կոմիտեի քննարկմանը պարբերական զեկույցներ ներկայացնել համանուն կոնվենցիայով երաշխավորվող իրավունքների կենսագործման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների և այդ բնագավառում ձեռք բերած առաջընթացի մասին:

Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության կոմիտե

Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի իրականացումը վերահսկվում է համանուն կոմիտեի կողմից: Մասնակից պետությունները պարտավորվում են հինգ տարին մեկ զեկույց ներկայացնել տվյալ պետությունում կոնվենցիայի կենսագործման ուղղությամբ իրենց ձեռնարկած քայլերի մասին: Ջեկույցներում պետք է նշվեն կոնվենցիայի կենսագործման ընթացքում առաջացած խոչընդոտները և տեղեկատվություն ապահովեն միգրացիայի հոսքի մասին: Ջեկույցներն ուսումնասիրելուց հետո կոմիտեն տվյալ մասնակից պետությանը հղում է համապատասխան մեկնաբանություններ:

Հետաքրքիր հետազիծ ունի Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա պատժի մասին կոնվենցիան (1948թ.), որը Երկրորդ համաշխարհային պատերազմի դաժանությունների ուղղակի արձագանքն է: Այն ցեղասպանության հանցագործությունը սահմանում է որպես որոշակի գործողությունների հանրագումար, որի նպատակն է կործանել ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական որևէ խումբ, և պարտավորեցնում է պետություններին պատասխանատվության ենթարկել ոճրագործներին: Այն ունի 135 անդամ պետություն: Հայաստանը միացել է այս կոնվենցիային 1993թ. հունիսի 23-ին:

Այդ կոնվենցիան նույնպես այս տարի բոլորում է իր 60 տարին: Ի տարբերություն մարդու իրավունքների վերոնշյալ փաստաթղթերի՝ Ցեղասպանության մասին կոնվենցիան երբեք օժտված չի եղել վերահսկման մեխանիզմով, որպեսզի ուսումնասիրի պայմանագրային դրույթների իրականացումը և անդամ պետություններին կանխարգելիչ և շտկիչ գործողությունների վերաբերյալ խորհրդատվությամբ ապահովի: Ցեղասպանության մասին կոնվենցիայի սկզբնական նախագիծը նախատեսում էր նման մեխանիզմ, բայց այդ գաղափարը չմտավ վերջնական տեքստ: Այս տարվա գարնանը Մարդու իրավունքների նախկին գերագույն հանձնակատար տիկ. Լուիզ Արբըրը հանդես եկավ առաջարկությամբ, որպեսզի կոն-

վենցիային կից կամընտիր արձանագրության ընդունումով ցեղասպանության կոնվենցիայի գործունակությունը վերահսկող մարմնի հիմք դրվի⁷:

2.2. Մարդու իրավունքների հանձնաժողովի փոխակերպումը խորհրդի

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հիմնադրվել է 1946թ. դեկտեմբերի 10-ին Տնտեսգլխորհի առաջին ժողովում և մեկն էր այն առաջին երկու «ֆունկցիոնալ հանձնաժողովներից», որոնք ստեղծվել են ՄԱԿ-ի վաղ շրջանում (մյուսը Կանանց կարգավիճակի հարցերի հանձնաժողովն է): Դա մի մարմին էր, որն ստեղծվել էր ՄԱԿ-ի կանոնադրության 68-րդ հոդվածի համաձայն և ստորագրվել ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների կողմից:

Այս մարմինն ունեցել է 2 փուլ: 1947-1967թթ. ընթացքում այն պասիվ քաղաքականություն էր վարում, այսինքն՝ հանձնաժողովի ուշադրությունը կենտրոնացած էր մարդու իրավունքների առաջնորդման և դաշնագրերի մշակման հարցում պետություններին աջակցելու, ոչ թե օրինախախտների հայտնաբերման ու դատապարտման վրա: Սա ինքնիշխանության սկզբունքների պահպանման շրջանն էր:

Բազմաթիվ օբյեկտիվ պատճառներով հանձնաժողովը արդյունավետ չէր, և հիմնականը այդ մարմնի քաղաքականացվածությունն էր և նրանում մարդու իրավունքները խախտողների ներկայությունը: Հետագա տարիներին՝ մինչ իր լուծարումը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հետզհետե ավելի ու ավելի հեղինակագրկվեց ակտիվիստների և կառավարությունների աչքում:

Մարդու իրավունքների հանձնաժողովը նպատակ ուներ ուսումնասիրել, վերահսկել և հանրությանը տեղեկացնել առանձին երկրների կամ տարածաշրջանների մարդու իրավունքների իրավիճակի (մարդու իրավունքների պաշտպանության պետական մեխանիզմների կամ լիազորությունների), ինչպես նաև աշխարհում տեղի ունեցող մարդու իրավունքների ոտնահարման լուրջ դեպքերի մասին (թեմատիկ մեխանիզմներ կամ լիազորություններ):

Հանձնաժողովին շարունակ քննադատում էին անդամակցության սկզբունքի համար: Բանն այն է, որ նրա անդամ երկրներից մի քանիսը մարդու իրավունքների առնչությամբ կասկածելի վարկ ունեին, այդ թվում այն երկրները, որոնց ներկայացուցիչները ընտրվում էին հանձնաժողովի նախագահ:

Քննադատության առարկա էր նաև այն, որ հանձնաժողովը մարդու իրավունքների խնդիրների կառուցողական քննարկումներով չէր զբաղվում, այլ քաղաքական մոտեցումով ընտրվող հարցերի քննության ֆորում էր: Միաժամանակ մարդու իրավունքների առնչությամբ կասկածելի տվյալներ ունեցող երկրների՝ հանձնաժողով մտնելու մեծ ցանկությունը դիտվում էր քննադատական հարձակումներից պաշտպանվելու միջոց:

1947թ. Մարդու իրավունքների հանձնաժողովը ստեղծեց *Մարդու իրավունքների խրախուսման և պաշտպանության ենթահանձնաժողովը*⁸ (նախկինում՝ *խտրականության կանխման և*

⁷ Տիկ. Արթրի հոդվածը տե՛ս <http://www.un.am/?laid=2&com=module&module=static&id=329>

⁸ Մանրամասները տե՛ս <http://www.unhchr.ch/html/menu2/2/sc.htm>

փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողով): Ենթահանձնաժողովը հավաքվում է ամեն տարի և բաղկացած է 26 փորձագետներից, որոնք աշխատում են անհատապես, ոչ թե որպես իրենց երկրի ներկայացուցիչ: Ենթահանձնաժողովը տարիների ընթացքում մեծապես ընդլայնել է իր գործունեության շրջանակները՝ ընդգրկելով մարդու իրավունքներին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Այն նախաձեռնել է բազմաթիվ ուսումնասիրություններ, մասնավորապես իրավական կանոնների զարգացման ուղղությամբ, և հանձնարարականներ է ներկայացրել հանձնաժողովին: Ոչ կառավարական կազմակերպությունները նույնպես մասնակցում են ենթահանձնաժողովի աշխատանքներին:
 Հայաստանը մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ է եղել 2002-2005թթ.:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը հանձնաժողովի իրավահաջորդն է: 2006թ. մարտի 15-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ստեղծեց Մարդու իրավունքների խորհուրդ, որին դեմ էին միայն ԱՄՆ-ն, Մարշալյան կղզիները, Պալաուն (որոնք ԱՄՆ-ի հետ կապված են Ազատ համագործակցության պայմանագրով) և Իսրայելը: Միացյալ Նահանգներն իր դիրքորոշումը բացատրեց նրանով, որ մարդու իրավունքները չարաշահող պետություններին խորհրդից հեռու պահելու բավարար երաշխիքներ չկան: Վենեսուելան ձեռնպահ մնաց և լուրջ առարկություններ արեց որոշ հարցերի վերաբերյալ, որոնք, նրա կարծիքով, անդամ երկրների ներքին գործերին անուղղակիորեն միջամտելու հնարավորություն են տալիս:

Փաստահավաք ու հետաքննական մեխանիզմները հավաքական անվանումով կոչվում են «հատուկ ընթացակարգեր», որոնք ստեղծվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների նախկին հանձնաժողովի կողմից և շարունակվում են Մարդու իրավունքների խորհրդում: «Հատուկ գեկուցողների», «հատուկ ներկայացուցիչների» կամ «անկախ փորձագետների» խմբերը՝ լիազորված խորհրդի կամ Տնտոնցխորհի կողմից, վերահսկում են մարդու իրավունքների ոտնահարումները առանձին երկրներում կամ քննարկում են մարդու իրավունքների համընդհանուր խնդիրները: «Հատուկ ընթացակարգերի» ուժը նրանց անկախության մեջ է: Ինքնուրույնությունը պահպանելու համար փորձագետները չեն վարձատրվում իրենց աշխատանքի համար:

Հավելյալ մանրամասների համար կարող եք այցելել.
<http://www.ohchr.org/english/bodies/chr/special/>

2.3. Մարդու իրավունքների հանձնաժողովի և Մարդու իրավունքների խորհրդի հիմնական տարբերությունները

1. **Անդամակցությունը:** ՄԱԿ-ի Մարդու իրավունքների նոր խորհուրդն ունի 47 անդամ պետություն. 13-ը՝ Աֆրիկայից, 13-ը՝ Ասիայից, 6-ը՝ Արևելյան Եվրոպայից, 8-ը՝ Լատինական Ամերիկայից և Կարիբյան կղզիներից, 7-ը՝ Արևմտյան Եվրոպայի և այլ երկրներից, այդ թվում Կանադայից և ԱՄՆ-ից: Մարդու իրավունքների նախկին հանձնաժողովն ուներ 53 անդամ պետություն: Նոր խորհուրդը ևս 2 տեղ է հատկացնում Ասիային և Արևելյան Եվրոպային՝ միաժամանակ կրճատելով Արևմտյան Եվրոպայի և այլ երկրների (ինչպես Կանադան և ԱՄՆ-ն) ներկայացուցիչների թիվը՝ 10-ից թողնելով միայն 7-ը:
2. **Ընտրության ձևը:** Նոր համակարգի համաձայն՝ անդամակցությունը որոշվում է ասամբլեայի բոլոր 192 անդամ պետությունների պարզ մեծամասնության ձայնե-

րով, ոչ թե քվեարկած երկրների մեծամասնությամբ: Անդամակցությունը վճռվում է գաղտնի քվեարկությամբ: Նախկին համակարգի համաձայն՝ տարածաշրջանային թեկնածուների ցուցակը պետք է հավանության արժանանար ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից:

3. **Վերահսկման ընթացակարգը:** ՄԱԿ-ի Մարդու իրավունքների նոր խորհուրդը «պարբերաբար» աչքի է անցկացնում Գլխավոր ասամբլեայում բոլոր երկրների մարդու իրավունքների վերաբերյալ արձանագրությունները: Իրավունքները լրջորեն խախտողները կարող են հեռացվել խորհրդից Գլխավոր ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդով: Այս դրույթի կողմնակիցների կարծիքով՝ դա կնպաստի, որ երկրներն իրենց անդամակցությունը որպես վահան չօգտագործեն քննադատությունից զերծ մնալու համար: Մարդու իրավունքների նախկին հանձնաժողովում ընդհանրապես վերահսկման գործընթաց չկար:
4. **Նստաշրջանի տևողությունը:** ՄԱԿ-ի մարդու իրավունքների նախկին մարմինը հանդիպում էր միայն տարեկան 6 շաբաթ՝ սովորաբար գարնանը: Մարդու իրավունքների խորհուրդը հանդիպում է ամբողջ տարվա ընթացքում և ավելի երկար ժամանակով: Նպատակն է ավելի արագ արձագանքել մարդու իրավունքների հարաճուն ճգնաժամերին և ուշադրություն դարձնել մարդու իրավունքների ոտնահարումներին անընդմեջ, ոչ թե միայն տարին մի քանի շաբաթ:

Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքների առանցքային նորարարություններից մեկն էլ մարդու իրավունքների իրավիճակի համընդհանուր պարբերական դիտարկումն է: Յուրաքանչյուր երկրի համար նշանակվում է երեք հատուկ զեկուցող: Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբի 2008թ. ժնևում ապրիլին և մայիսին կայացած առաջին և երկրորդ նստաշրջաններում արդեն գնահատվել է 32 երկրների իրավիճակը մարդու իրավունքների ոլորտում: 2008թ. երեք նստաշրջանների ընթացքում այդ մեխանիզմը կընդգրկի 48 պետություն: Նախատեսված է, որ 4 տարվա ընթացքում խորհրդի «մանրադիտակի» տակ կհայտնվեն աշխարհի բոլոր երկրները՝ առանց բացառության:

3. ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող այլ մարմիններ և ընթացակարգեր

3.1. Կանոնադրական ընթացակարգեր

Ընթացակարգ 1235: Տնտեսխորհի 1967թ. 1235 (XLII) բանաձևի հիման վրա Մարդու իրավունքների հանձնաժողովը (ներկայումս՝ խորհուրդը) կարող է ուսումնասիրել մարդու իրավունքների՝ աշխարհի ցանկացած անկյունում կատարված խախտումները և հատուկ զեկուցող կամ ներկայացուցիչ (անկախ փորձագետ) նշանակել: Վերջիններիս լիազորությունները կարող են տարբեր լինել, սակայն, որպես կանոն, ընդգրկում են հետևյալ պարտականությունները. 1) առանձին երկրներում ուսումնասիրել մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը (երկրների զեկուցողներ կամ ներկայացուցիչներ) կամ առանձին խնդրահարույց թեմաներ (թեմատիկ զեկուցողներ և աշխատանքային խմբեր), 2) Մարդու իրավունքների հանձնաժողովին (առանձին դեպքերում նաև Գլխավոր ասամբլեային կամ Գլխավոր քարտուղարին) զեկույցներ ներկայացնել սեփական եզրահանգումներով ու հանձնարարական-

ներով, 3) արդյունավետ կերպով արձագանքել ստացվող տեղեկատվությանը մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ:

Ի տարբերություն մարդու իրավունքների վերահսկման պայմանագրային մարմինների՝ կանոնադրական ընթացակարգերը հատուկ սահմանված ձևեր չունեն, որոնցով պետք է ներկայացվեն մարդու իրավունքների վերաբերյալ խախտումները: Այդ հաղորդումները կարող են ուղարկել խախտումների զոհերը կամ նրանց ազգականները, ոչ կառավարական կազմակերպությունները և այլն: Հաղորդումները կարող են արվել ցանկացած ձևով (նամակ, ֆաքս, հեռագիր) և վերաբերեն թե՛ անհատական դեպքերին, թե՛ այս կամ այն իրավունքի զանգվածային խախտումներին: Հատուկ զեկուցողների, ներկայացուցիչների և անկախ փորձագետների խմբերի հասցեին հաղորդումները պետք է ուղարկել ՄԱԿ-ի Ժնևի բաժանմունք՝ նշելով հասցեատիրոջ հասցեն. օրինակ՝ խոշտանգումների վերաբերյալ հաղորդումները կարելի է ուղարկել ֆաքսիմիլային կապի «թեժ գծով» կամ փոստով:

Հատուկ զեկուցողի ևս մի տեսակ է Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, որը զեկույցներ է ներկայացնում անմիջականորեն Գլխավոր քարտուղարին: Այս զեկուցողները սովորաբար նշանակվում են որպես արձագանք այս կամ այն երկրում ստեղծված արտակարգ իրավիճակի՝ կապված մարդու իրավունքների հետ: Որոշ դեպքերում երկրների կամ թեմատիկ զեկուցողի լիազորությունները տրվում են անմիջականորեն Գլխավոր քարտուղարին: Այդ դեպքերը սովորաբար չափազանց արտակարգ կամ քաղաքական լուրջ ենթատեքստ ունեցող իրավիճակներ են (օրինակ՝ Կոսովոն կամ Իսրայելի ներխուժումը արաբական տարածքներ):

Ընթացակարգ 1503: Տնտսոցխորից 1970թ. մայիսի 27-ին հաստատեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումներին վերաբերող հաղորդումների քննության ընթացակարգը», որը հայտնի է խորհրդի համապատասխան բանաձևի համարով, որպես «Ընթացակարգ 1503»: Այս ընթացակարգը վերաբերում է ոչ թե մասնավոր դեպքերին, այլ նրանց, որոնք առնչվում են տևական ժամանակում մեծ թվով մարդկանց շահերի հետ կապված իրավիճակներին: 1503 ընթացակարգով անցնող հաղորդումները քննվում են հետևյալ կերպ:

Ամեն ամիս ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը ներկայացնում է ստացված հաղորդումների ցանկը՝ յուրաքանչյուր դեպքի համառոտ նկարագրությամբ, ինչպես նաև բոլոր պատասխանները, որոնք Մարդու իրավունքների խրախուսման և պաշտպանության ենթահանձնաժողովը ստանում է կառավարություններից: Ենթահանձնաժողովի աշխատանքային խումբը՝ բաղկացած 5 անդամից, ուսումնասիրում է բոլոր հաղորդումներն ու դրանց կապակցությամբ կառավարությունների պատասխանները և առանձնացնում այն հաղորդումները, որոնք անվիճելիորեն վկայում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սխտեմատիկ կոպիտ խախտման մասին: Տվյալ հաղորդումը ենթահանձնաժողովին հանձնելու հարցը որոշվում է քվեարկությամբ: Այն հաղորդումների կապակցությամբ, որոնք ենթահանձնաժողովին չեն հանձնվում, այլևս որևէ գործողություն չի ձեռնարկվում: Այսպիսով, աշխատանքային խումբը գործում է որպես զտող՝ մի կողմ թողնելով մեծ թվով հաղորդումներ:

Ընտրության ձևական չափանիշը ընթացակարգի կանոններն են, ըստ որոնց՝ հաղորդումը ընդունելի է համարվում միայն այն պարագայում, երբ, ինչպես ցույց է տալիս դրա քննությունը, բավարար հիմքեր կան ենթադրելու, որ իրոք առկա են մարդու իրավունքների կոպիտ խախտումներ: Հաղորդումը կարող է ընդունվել, եթե այն ստացվում է առանձին անձանցից կամ

խմբերից, որոնք հայտարարում են, թե իրենք մարդու իրավունքների խախտման գոհ են: Հաղորդումը կարող է ընդունվել նաև այն դեպքում, եթե ստացվում է այն անձանցից կամ խմբերից, որոնք անմիջական և արժանահավատ տվյալներ ունեն խախտումների մասին: Չեն ընդունվում անանուն հաղորդումները, ինչպես նաև այն հաղորդումները, որոնք հիմնված են սոսկ զանգվածային լրատվամիջոցներով տարածված տեղեկությունների վրա: Յուրաքանչյուր հաղորդման շարադրանքում պետք է նշվի դրա նպատակը և այն իրավունքները, որոնք խախտվել են: Որպես կանոն չեն ընդունվում նաև այն հաղորդումները, որոնք կոպիտ արտահայտություններ կամ բողոքի առարկա հանդիսացող պետության հասցեին վիրավորական կշտամբանքներ են բովանդակում: Այդ հաղորդումները, այնուհանդերձ, քննվում են նման արտահայտությունները հանելուց հետո, եթե համապատասխանում են մյուս պահանջներին: Որևէ հաղորդում չի կարող ընդունվել, եթե հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը կամ քաղաքական նպատակներ է հետապնդում: Բացի այդ, նախքան հաղորդումն ուղարկելը պետք է սպառված լինեն տվյալ երկրի իրավական պաշտպանության բոլոր միջոցները (խախտման վերաբերյալ հայցը պետք է քննված լինի բոլոր ատյանների դատարաններում), եթե համոզիչ կերպով ցույց չի տրվում, որ ազգային մակարդակով որոշումները չեն կարող արդյունավետ լինել կամ չափից ավելի դանդաղ կիրականացվեն:

Ընտրված հաղորդումներն այնուհետև քննվում են ենթահանձնաժողովի փակ նիստում: Ենթահանձնաժողովի 26 անդամները հաղորդումները քննում են առանձին-առանձին և գաղտնի քվեարկությամբ որոշում ընդունում (ծայների մեծամասնությամբ) հանձնել այն Մարդու իրավունքների հանձնաժողովի (խորհրդի) քննությանը:

Երրորդ փուլում գործողության մեջ է մտնում իրավիճակների աշխատանքային խումբը (5 հոգի, Մարդու իրավունքների հանձնաժողովի անդամներ՝ պետությունների պաշտոնական ներկայացուցիչներ): Այս խումբն իր փակ նստաշրջանը գումարում է ամեն տարի, Մարդու իրավունքների հանձնաժողովի հերթական նստաշրջանի նախօրեին, մեկ շաբաթ տևողությամբ: Աշխատանքային խումբն ուսումնասիրում է բոլոր գործերը, որոնք ներկայացրել է հանձնաժողովը, և ամեն մի առանձին գործի համար որոշման նախագիծ է պատրաստում (կոնսենսուսով): Այդ նախագծերը հանձնվում են Մարդու իրավունքների հանձնաժողովի լիազումար նիստի քննությանը:

Հանձնաժողովի այն նիստերը, որոնք քննում են յուրաքանչյուր գործի որոշման նախագիծը, փակ են: Բացի հանձնաժողովի անդամներից, նիստերին կարող են մասնակցել, պատասխանել հարցերին և առարկություններ անել այն պետությունների ներկայացուցիչները, որոնց մասին են քննվող գործերը: Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել հանել գործը օրակարգից կամ ապագայում շարունակել քննությունը: Լավագույն դեպքում կարող է անկախ փորձագետ նշանակվել, որպեսզի խորությամբ ուսումնասիրի գործը: Եթե տվյալ երկիր այցելելու անհրաժեշտություն է ծագում, ապա այդ այցելությունը կարող է տեղի ունենալ միայն շահագրգիռ պետության համաձայնությամբ: Բացի այդ, հանձնաժողովը կարող է հանձնարարականներ տալ Տնտոնցխորհին, սակայն գործնականում դա շատ հազվադեպ է լինում: Տնտոնցխորհը քննարկում է հանձնաժողովի հանձնարարականները և դրա հիման վրա հանձնարարականներ պատրաստում համապատասխան պետության համար: Այդ հանձնարարականները պարտադիր բնույթ չունեն, բայց բավական ծանրակշիռ են, քանի որ արտահայտում են միջազգային հանրության մտահոգությունը տվյալ երկրում ստեղծված իրավիճակի կապակցությամբ:

1503 ընթացակարգի հետ կապված բոլոր միջոցները գաղտնի են, քանի դեռ հանձնաժողովը զեկույց չի ներկայացնում Տնտոնցխորհին: Սկսած 1978 թվականից՝ Մարդու իրավունքների

հանձնաժողովի նախագահը բաց նիստի ժամանակ հայտարարում է այն երկրների անունները, որոնք բողոքի քննության առարկա են:

3.2. ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընթացակարգեր

ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) կանոնադրությունը ընդունվել է 1945թ., ուժի մեջ մտել 1946թ.: Ըստ այդ կանոնադրության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նպատակն է *«նպաստել խաղաղության և անվտանգության ամրապնդմանը՝ ուժեղացնելով ժողովուրդների համագործակցությունը կրթության, գիտության և մշակույթի միջոցով հանուն ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված արդարության, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգման բոլոր ժողովուրդների համար՝ առանց ռասայի, սեռի, լեզվի և կրոնի տարբերակման»*: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Փարիզում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում գոյություն ունեն մարդու իրավունքների ոլորտի չափորոշիչների կատարման վերահսկման մի քանի մեխանիզմներ, հատկապես խոսքի ազատության, կրթության իրավունքի և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու իրավունքի առնչությամբ:

Կրթության ոլորտում խտրականության դեմ կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված է, որ մասնակից պետությունները պետք է իրենց պարբերական զեկույցներում տեղեկություններ հաղորդեն կոնվենցիան իրականացնելու նպատակով ձեռնարկված օրենսդրական, վարչական և այլ միջոցների վերաբերյալ: Այդ զեկույցները ներկայացվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր խորհրդաժողովին: Ըստ նույն կոնվենցիայի արձանագրության՝ ստեղծված է *Հաշտեցման և բարի ծառայությունների հանձնաժողով*, որը կոչված է հարթեցնելու կոնվենցիայի մասնակից պետությունների միջև ծագող տարաձայնությունները: Եթե որևէ մասնակից պետություն համարում է, որ մի այլ մասնակից պետություն չի կենսագործում կոնվենցիայի դրույթները, կարող է տվյալ պետության ուշադրությունը հրավիրել այդ հարցի վրա: Երեք ամսվա ընթացքում բողոքը ստացող պետությունը բողոքող պետությանը գրավոր պարզաբանումներ կամ հայտարարություններ է ներկայացնում, որոնք բովանդակում են արդեն իսկ կիրառված, կիրառվող կամ կիրառվելիք ընթացակարգերն ու միջոցները: Եթե վեց ամսվա ընթացքում հարցը երկկողմ բանակցությունների միջոցով չի կարգավորվում, ապա մյուս պետությունն էլ իրավունք ունի հարցը ներկայացնելու հանձնաժողովին: Վերջինս իրեն հանձնված գործով զբաղվում է միայն այն դեպքում, երբ բոլոր ներքին հնարավորությունները սպառված են լինում: Հանձնաժողովն իր բարի ծառայություններն է մատուցում վիճող պետություններին, որպեսզի նրանք կարողանան հարցը բարեկամաբար լուծել: Բոլոր դեպքերում հանձնաժողովը Գլխավոր տնօրենի միջոցով զեկույց է հրապարակում, որը հարցի բարեկամական լուծման պարագայում սահմանափակվում է փաստերի և ընդունված որոշման մասին համառոտ տեղեկատվությամբ: Հակառակ դեպքում հանձնաժողովը փաստերի հիման վրա զեկույց է պատրաստում և մատնանշում այն հանձնարարականները, որոնք արել է հաշտեցման նպատակով:

Միջազգային փոխըմբռնման, համագործակցության և խաղաղության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման ոգով դաստիարակության հանձնարարականի իրականացման նպատակով ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գործադիր խորհուրդը հիմնել է *Կոնվենցիաների և հանձնարարականների հանձնաժողով*, որը լիազորված է քննարկելու կրթության, գիտութ-

յան, մշակույթի և տեղեկատվության ոլորտում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ բողոքները: Դրանք կարող են ուղարկվել խախտումների գոհերի անունից, ինչպես նաև նման խախտումների մասին արժանահավատ տեղեկություններ ունեցող խմբերի կամ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից: Որպես կանոն, հանձնաժողովը ձգտում է կողմերին հանգեցնել հարցի բարեկամանական լուծման: Հանձնաժողովը տարբերում է «դեպքերը» և «հարցերը»: «Դեպք» հասկացությունը վերաբերում է անհատական դեպքերին, իսկ «հարցերը» վերաբերում են մարդու իրավունքների զանգվածային և սիստեմատիկ խախտումներին: Գործադիր խորհուրդը և Գլխավոր խորհրդաժողովը իրենց բաց նիստերում քննում են մարդու իրավունքների խախտումների մասին «հարցերը»:

3.3. Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ընթացակարգեր

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) ստեղծվել է 1919թ: ԱՄԿ-ի և ՄԱԿ-ի միջև կապի հաստատման համաձայնագիրը հաստատվել է 1946թ.: ԱՄԿ-ի նպատակը աշխարհում աշխատավորների համար սոցիալական արդարության հաստատումն է, ինչպես նաև այդ նպատակին հասնելու համար համապատասխան իրավունքների խրախուսումն ու պաշտպանությունը: Այդ կազմակերպությունը յուրահատուկ է նրանով, որ իր քաղաքականությունը մշակելիս աշխատավորների և ձեռնարկատերերի ներկայացուցիչները կառավարությունների ներկայացուցիչների թվին հավասար ձայների իրավունք ունեն:

ԱՄԿ-ի գլխավոր մարմինը **Աշխատանքի միջազգային խորհրդաժողովն** է (ԱՄԽ), որի նիստերը ամեն տարի տեղի են ունենում Ժնևում: Կառավարությունների պատվիրակություններում ընդգրկվում են կառավարության երկու ներկայացուցիչ, մեկ աշխատավորների և մեկ ձեռնարկատերերի ներկայացուցիչ: ԱՄԽ-ի նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածներում ԱՄԿ-ի աշխատանքները ղեկավարում է Վարչական խորհուրդը՝ բաղկացած կառավարությունների 28 ներկայացուցիչներից, աշխատավորների և գործատուների 14-ական ներկայացուցիչներից:

ԱՄԿ-ն միջազգային չափորոշիչներ է մշակում աշխատանքի հետ կապված բոլոր ոլորտների և հիմնախնդիրների վերաբերյալ: ԱՄԿ-ի ընդունած կոնվենցիաները դրանք վավերացրած պետությունների համար պարտադիր ուժ ունեն, իսկ հանձնարարականները ուղեմիջներ են ազգային օրենսդրության, քաղաքականության և գործելակերպի համար:

ԱՄԿ-ն իր ստեղծման օրից ի վեր ընդունել է ավելի քան 300 կոնվենցիա և հանձնարարական: ԱՄԿ-ի շրջանակներում գործում է դրանց կատարումը վերահսկող երեք հիմնական մեխանիզմ. գեկույցների ներկայացման ընթացակարգը, բողոքների և հաղորդումների ներկայացման ընթացակարգը և հետաքննությունների ու հետազոտությունների ընթացակարգը:

Հավելված 1

ՄԻՀՀ-ի 30 հոդվածների առարկայական ցանկ

Ազատ արտահայտվելու, խոսքի և մամուլի ազատություն	18 , 19 , 20 , 21
Անապաստանություն, ապաստան և ունեցվածք	17 , 22 , 25 , 27
Աշխատանքի և աշխատատեղի իրավունքներ	4 , 13 , 20 , 23 , 24
Առողջություն	25
Գաղտնիություն	12
Երեխայի իրավունք	1 , 4 , 16 , 24
Զարգացում	17 , 22 , 25 , 28
Ընտանիք	12 , 16
Իրավական օրենք և հավասարություն օրենքի առաջ	6 , 7 , 8 , 9 , 10 , 11 , 21
Խաղաղություն	3 , 12 , 28
Խտրականություն	1 , 2 , 7
Կանանց իրավունքներ	1 , 2 , 4 , 6 , 7 , 20 , 21 , 24
Կտտանք և ստորացուցիչ պատիժ	5 , 6
Կրթություն	18 , 19 , 20 , 26 , 27 , 28
Կրոնի ազատություն	2 , 7 , 18 , 19
Մշակույթ և ժառանգություն	18
Ներգաղթ	6 , 13 , 14
Սոցիալական ապահովություն	3 , 22 , 25
Ստրկություն և ստրկացում	4 , 6 , 24
Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքներ	1 , 2 , 6 , 7
Տնտեսական և սոցիալական իրավունք	4 , 6 , 8 , 22 , 23 , 24 , 25 , 26 , 27 , 28
Փախստականներ, ազգային պատկանելություն, պետականության բացակայություն և ապաստան	2 , 6 , 7 , 13 , 14 , 15
Փոքրամասնությունների իրավունքներ	2 , 4 , 6 , 7
Քաղաքական բանտարկյալներ	5 , 6 , 7 , 8 , 9 , 10 , 11
Քաղաքական իրավունք, քվեարկություն և մասնակցություն	10 , 20 , 21
Քաղաքացիական իրավունք	2 , 3 , 6 , 7 , 9 , 10 , 11 , 18 , 19 , 20 , 21

Հավելված 2

Մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերի և դրանց կանոնադրող արձանագրությունների աղյուսակը ըստ ժամանակագրության, ՀՀ մասնակցությունը դրանց


[Ըստ <http://www2.ohchr.org/english/bodies/ratification/> վերկայքի 2008թ. տվյալների]

Հապավումը	Փաստաթղթի անվանումը	Ընդունման թվականը	Ուժի մեջ մտնելու թվականը	Կոմիտեն	ՀՀ մասնակց. թվականը	
					Ստորագր.	Վավերացում (վ), միացում (մ)
	Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա	9 դեկտ. 1948	12 հունվ. 1951	---	---	23 հունիս 1993 (մ)
ICERD	Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա	7 մարտ 1966	4 հունվ. 1969	CERD	---	23 հունիս 1993 (մ)
ICESCR	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր	16 դեկտ. 1966	3 հունվ. 1976	CESCR	---	13 սեպտ. 1993 (մ)
ICCPR	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր	16 դեկտ. 1966	23 մարտ 1976	CCPR	---	23 հունիս 1993 (մ)
ICCPR-OP1	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրություն	16 դեկտ. 1966	23 մարտ 1976	HRC	---	23 հունիս 1993 (մ)
CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա	18 դեկտ. 1979	3 սեպտ. 1981	CEDAW	---	13 սեպտ. 1993 (մ)
CAT	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա	10 դեկտ. 1984	26 հունիս 1987	CAT	---	13 սեպտ. 1993 (մ)
CRC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա	20 նոյ. 1989	2 սեպտ. 1990	CRC	---	23 հունիս 1993 (մ)

ICCPR-OP2	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կանոնադրությունը և վերացումն մտապատժի	15 դեկտ. 1989	11 հուլիս 1991	HRC	---	---
ICRMW	Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա	18 դեկտ. 1990	1 հուլիս 2003	CMW	---	---
OP-CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կանոնադրություն	6 հոկտ. 1999	22 դեկտ. 2000	CEDAW	---	14 սեպտ. 2006 (մ)
OP-CRC-AC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կանոնադրություն արձանագրություն զինված հակամարտություններում երեխաների ներգրավվածության մասին	25 մայիս 2000	12 փետր. 2002	CRC	24 սեպտ. 2003	30 սեպտ. 2005 (վ)
OP-CRC-SC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կանոնադրություն երեխաների վաճառքի, մանկական պոռնկության և պոռնոգրաֆիայի մասին	25 մայիս 2000	18 հունվ. 2002	CRC	24 սեպտ. 2003	30 սեպտ. 2005 (վ)
OP-CAT	խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նկատառող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիային կից կանոնադրություն արձանագրություն	12 դեկտ. 2002	22 հունիս 2006	CAT	---	14 սեպտ. 2006 (մ)
	Հաշմանդան անձանց իրավունքների մասին կոնվենցիա	13 դեկտ. 2006	3 մայիս 2008	---	30 մարտ 2007	---
	Հաշմանդան անձանց իրավունքների մասին կոնվենցիային կից կանոնադրություն	13 դեկտ. 2006	3 մայիս 2008	---	30 մարտ 2007	---
	Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա	20 դեկտ. 2006	---	---	10 ապրիլի 2007	---

Հավելված 3

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային համակարգը
Պայմանագրերը և պայմանագրային մարմինների մանդատները



1 Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր
 2 Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
 3 Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա
 4 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
 5 Խոշտանգումների և այլ դժբանք, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա
 6 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
 7 Բոլոր միջազգային աշխատավորների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա
 8 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կանոնադրական արձանագրություն
 9 Խոշտանգումների և այլ դժբանք, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիային կից կանոնադրական արձանագրություն
 10 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կանոնադրական արձանագրություն գինկա՝ հակամարտություններում երեխաների մասին
 11 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կանոնադրական արձանագրություն
 12 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կանոնադրական արձանագրություն
 13 ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհուրդ
 14 Կանխարգելման գծով ենթակոմիտե

Հավելված 4

ՀՀ-ի ներկայացրած զեկույցները պայմանագրային մարմիններին

[Ըստ www.ohchr.org/EN/countries/ENACARRegion/Pages/AMIndex.aspx վեբկայքի 2008թ. տվյալների]

Կունվենցիան	Տեսակը	Նշանը	Թվականը	Փաստաթղթի լրիվ անվանումը
CEDAW Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա	Ազգային զեկույց	CEDAW/C/ARM/1	26/09/1995	Ներկայացված ազգային զեկույցի դիտողությունները
	Եզրափակիչ դիտողություններ	A/52/38/Rev.1, Part II paras. 35-68	12/08/1997	Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Ազգային զեկույց	CEDAW/C/ARM/2	09/09/1999	Ազգային հերթական երկրորդ զեկույցը
	Եզրափակիչ դիտողություններ	A/57/38, paras. 25-69	23/08/2002	Կոմիտեի եզրափակիչ դիտողությունները-CEDAW
	Ազգային զեկույց	CAT/C/24/Add.4/Rev.1	21/12/1995	
	Ազգային զեկույց	CAT/C/24/Add.4/Rev.1	17/01/1996	1994թ. ներկայացման ենթակա ազգային նախնական զեկույցը
	Ազգային զեկույց	CAT/C/24/Add.4/Rev.1	31/01/1996	
	Եզրափակիչ դիտողություններ	A/51/44, paras. 84-101	09/07/1996	Ընդունված կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Ազգային զեկույց	CAT/C/43/Add.3	13/09/1999	1998թ. ներկայացման ենթակա ազգային հերթական երկրորդ զեկույցը
	Եզրափակիչ դիտողություններ	A/56/44, paras. 33-39	17/11/2000	Ընդունված կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
CRC Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա	Ազգային զեկույց	CRC/C/28/Add.9	30/07/1997	1995թ. ներկայացման ենթակա ազգային զեկույցը
	Ազգային զեկույց	CRC/C/28/Add.9	31/07/1997	
	Եզրափակիչ դիտողություններ	CRC/C/15/Add.119	24/02/2000	Երեխայի իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Ազգային զեկույց	CRC/C/93/Add.6	17/07/2003	2000թ. ներկայացման ազգային հերթական երկրորդ զեկույցը

CERD Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա	Ազգային զեկույց	CERD/C/289/Add.2	28/11/1997	1996թ. ներկայացման ենթակա ազգային զեկույցը
	Եզրափակիչ դիտողություններ	CERD/C/304/Add.51	19/03/1998	Ռասայական խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Եզրափակիչ դիտողություններ	CERD/C/304/Add.51	30/03/1998	
CCPR Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր	Ազգային զեկույց	CERD/C/372/Add.3	13/05/2002	2000թ. ներկայացման ենթակա ազգային հեղթական չորրորդ զեկույցը
	Եզրափակիչ դիտողություններ	A/57/18, paras.269-291	01/11/2002	Ռասայական խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Ազգային զեկույց	CCPR/C/92/Add.2	30/04/1998	1997թ. ներկայացման ենթակա ազգային զեկույց
CESCR Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր	Ազգային զեկույց	CCPR/C/92/Add.2	14/07/1998	
	Ազգային զեկույց	CCPR/C/79/Add.100	19/11/1998	Մարդու իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Ազգային զեկույց	E/1990/5/Add.36	05/12/1998	Նախնական զեկույց
	Ազգային զեկույց	E/1990/5/Add.36	08/03/1999	
	Եզրափակիչ դիտողություններ	E/C.12/1/Add.39	08/12/1999	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտողությունները

Հապավումներ

Պայմանագրերը

ICERD	Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա
ICCPR	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ICESCR	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր
CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
CAT	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա
CRC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
ICRMW	Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա
ICCPR-OP1	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրություն
ICCPR-OP2	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրություն ի վերացումն մահապատժի
OP-CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն
OP-CRC-AC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն զինված հակամարտություններում երեխաների ներգրավվածության մասին
OP-CRC-SC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն երեխաների վաճառքի, մանկական պոռնկության և պոռնոգրաֆիայի մասին
OP-CAT	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն

Պայմանագրային մարմինները

CAT	Խոշտանգման դեմ կոմիտե
CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե
CERD	Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե
CESCR	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե
CMW	Միգրանտ աշխատավորների իրավունքների կոմիտե
CRC	Երեխայի իրավունքների կոմիտե
HRC	Մարդու իրավունքների կոմիտե

Այլ

ԱՄԽ	Աշխատանքի միջազգային խորհրդատու
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՀՏԿ	Հանրային տեղեկատվության վարչություն
ՄԻ	Մարդու իրավունքներ
ՄԻՀՀ	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
ՄԻԳՀ	Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար
ՄԻԳՀԳ	Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ
Տնտսոցխորհ	Տնտեսական և սոցիալական հարցերով խորհուրդ
ՅՈՒՆԵՍԿՕ	ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն

Օգտագործված և օգտակար գրականության ու հղումների ցանկ

1. Երիցյան Ա. Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնահարցեր: (Տեսական և կիրառական վերլուծություն). – Եր.: Վահան, 2001. – 320 էջ. – Գրակ. ցանկ՝ 159 անուն:
2. Ինչպես դիմում գրել ՄԱԿ-ին մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Խորհուրդներ բնակչությանը / Կազմ.՝ Հ.Ա.Ասրյան: «Ավանգարդ» հումանիտար հետազոտությունների կենտրոն.— Եր.,1994.— 16 էջ.— (Թողարկում 1):
3. Լևին Լ. Մարդու իրավունքները: Հարցեր և պատասխաններ / Նկարիչ՝ Պլանտու. Հայաստանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողով.— Եր.: Գինդ, 1994.— 92 էջ:
4. Մարդու իրավունքներ: Հարցեր և պատասխաններ / Թարգմ.՝ Ռ. Ներսիսյան; ՀՀ արտաքին գործերի նախարարություն.— Եր.: Վան, 1997.— 54 էջ:
5. Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին.— Եր., 2002.— 334 էջ:
6. Հովհաննիսյան Վ. Միջազգային պայմանագրերի կնքման և կատարման տեսական և գործնական մի քանի հարցեր / Միջազգային իրավունքի հայկական ընկերակցություն.—Եր., 2001.—254 էջ:
7. ՄԱԿ-ի և մարդու իրավունքների նյութերի ժողովածու / ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակ.— Երևան, 2002.— 196 էջ:
8. Մարդու իրավունքներ: Գրականության ցանկ / Կազմ.՝ Ա. Իշխանյան, Ա. Հարությունյան, Լ. Սահակյան, Խմբ.՝ Ա. Հարությունյան: Հայաստանի Հելսինկյան կոմիտե.— Երևան, 2005.— 148 էջ:
9. Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը: Գործողություն հանուն առաջընթացի: Մարդկային զարգացման ազգային զեկույց / ՄԱԶԾ.— Հայաստան, 2000.— 180 էջ:
10. Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Փաստաթղթերի ժողովածու: Գիրք Ա =International treaties on Human Rights the participation of the Republic of Armenia / Կազմ.՝ Վլ.Հովհաննիսյան, Լ.Հակոբյան, Լուս.Հակոբյան, Ն.Սողոմոնյան; Միջազգային իրավունքի հայկական ընկերակցություն.— Եր.: Տիգրան Մեծ, 2001.— 471 էջ:
11. Մարդու իրավունքների ներածություն / Թարգմ.՝ Կ.Սուրադյան; ԱՄՆ տեղեկատվական գործակալություն.— Վիեննա, ա.թ.— 49 էջ:
12. Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն: Մարդու իրավունքների փաստաթղթեր: Հազարամյակի հռչակագիր: Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն / ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ.— Եր., 2005:
13. Սարգսյան Վ., Ռոյթեր Վ., Խյուֆներ Կ. Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և հայաստանյան ընթացակարգեր.— Եր.: ՄԻԺԻ, 2003.— 308 էջ:
14. Азаров А. Права человека: Новое знание / Центр. ин-т непрерывного образования об-ва “Знание”.— М., 1995.— 255 с.
15. Азаров А., Ройтер В., Хюфнер К. Права человека. Международные и российские

механизмы защиты.- М., 2003.- 560 с.

16. Всемирная конференция по правам человека: Венская декларация и Программа действий: Июнь 1993 года. С выступлением Генерального секретаря ООН Бутроса-Бутроса Гали по открытию конференции / ООН.– Нью-Йорк, 1995.– 60с.
17. Гражданские и политические права: Комитет по правам человека / ООН, Центр по правам человека.–Женева, 1997.–56 с.– (Права человека: Изложение фактов №15).
18. Комитет по экономическим, социальным и культурным правам / ООН, Центр по правам человека.– Женева, 1996.–72 с.–(Права человека: Изложение фактов №16(rev 1)).
19. Международный пакт о гражданских и политических правах: Жалоба в Комитет по правам человека в Женеве. Прежде чем обратиться с жалобой - прочти / ПРООН, Бюро представителя по правам граждан, Региональное бюро по странам Европы и СНГ. – Братислава, 1999.– 48с.
20. Механизм в области прав человека / ООН, Центр по правам человека.– Женева, 1989. – 32 с.– (Права человека: Изложение фактов № 1).
21. Права человека. Вопросы и ответы / ООН.– Нью-Йорк, 1970.–59с.
22. Права человека и ты. Основные документы Организации объединенных наций, Организации по безопасности и сотрудничеству в Европе и Совета Европы о правах человека / Сост. и ред.: Ф.Куинн; ОБСЕ, БДИПЧ, Госдепартамент США, Агентство США по международному развитию.– Варшава, 1999.– 288с.
23. Права человека: Учебник для вузов / Отв. Ред. Е. А. Лукашева; Комиссия по правам человека при Президенте РФ, Ин-т государства и права РАН. – М.: НОРМА- ИНФРА. М, 2000.– 573с.
24. Процедуры представления и рассмотрения сообщений / ООН, Центр по правам человека .– Женева, 1991.– 13с.– (Права человека. Изложение фактов № 7).
25. Шреплер Х. Международные организации. Справочник.- М., 1995.
26. Human Rights: A Basic Handbook for UN Staff.- OHCHR, United Nations Staff College Project. (e-book)
27. The United Nations Human Rights Treaty System: An Introduction to the core human rights treaties and the treaty bodies.- Fact Sheet No.30.- OHCHR. (e-book)
28. <http://www.un.am>
29. <http://www.ohchr.org>
30. <http://www.un.org/rights/>
31. <http://www.unhchr.ch>

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների մանդատը
Տեղեկագիր No. 2
Հոկտեմբեր 2008թ.

UN Human Rights Mandate
Reference Paper No. 2
October 2008



UN Department of Public Information
Yerevan Office
UN AN-1000-October 2008
UNO/DPI Yerevan/086



Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի
տպարանում:
Ք. Երևան, Տերյան 72, հեռ. 58.22.99
E-mail: info@limush.am